«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՀԻՄՆԱՐԿ

ՀՀ ք.Երևան, Շիրակի 88/1
Հեռ. +374-41-777-983
Էլ. հասցե՝ easm.himnark@gmail.com

«03» ապրիլի 2024թ. ԵԼՔ-84

ՏԻԳՐԱՆ ԱՆԱՆՅԱՆ ՀՐԱՆՏԻ ԱՁ-Ի
ՏՆՕՐԵՆ Տ. ԱՆԱՆՅԱՆ
(հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չեխովի փ., շ. 23, բն. 4,)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի (այսուհետ՝ Գնորդ1 և Տիգրան Անանյան Հրանտի Ա/Ձ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024 թվականի փետրվարի 15-ին կնքված «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-1» ծածկագրով գնման պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 համաձայնագրի շրջանակներում վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները, սակայն Վաճառողը Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչ օրս չի կատարել ամբողջ քանակով և ծավալնելորով ստանձնած պարտավորությունները:

2024 թվականի մարտի 21-ին Գնորդը գրությամբ դիմել է Վաճառողին, որպեսզի տասը օրվա ընթացքում մատակարարվեն թիվ 1 հավելվածով սահմանված չմատակարարված ապրանքները, սակայն Վաճառողի կողմից այդպես էլ չի մատակարարվել ամբողջ խմբաքանակը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, իսկ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագրի խախտումն էական է համարվում ապրանքի մատակարարման ժամկետները 10 օրից ավելի խախտվելու դեպքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն *չկատարելը* կամ *անպատշաճ* (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ,

հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոգրյալից ելնելով և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1, 2.1.3, 2.1.6, 2.1.7 կետերով և 2.1.7.1 կետի «բ» ենթակետով սահմանված կարգավորումները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պայանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտականությունները չկատարելու հիմքով «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Միաժամանակ հայտնում ենք, որ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Եթե՝

սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏՆՕՐԵՆ ՍԱՇԱ ԳԱՍՏՎԱԼՅԱՆ